ձանձրացրեց ինձ: Աչք ածեցի դէպի խրճիթի շուրջը: Նայում էի, թէ ինչ բան ինչ տեղ է դրած: Իր տեղումն էր աւելը, իր տեղումն էր անթրոցը, իր տեղումն էր լոացքի տաշտը: Թառի վրայ թառած էր աքաղաղը, իր յարեմը շուրջը հաւաքած: Մարիներից մէկը կամաց անցաւ աքաղաղի ետեւից եւ, խորամանկութեամբ մի կողմ հրելով նրա կշտին կանգնած առաջին մարիին, ինքը բռնեց նրա տեղը: Այդ հաճոյամոլութիւնը գրգռեց առաջինի խանդը, նա սկսեց տրտնջալ: Աքաղաղը, կարգ պահպանելու համար, կտցահարեց նորեկի գլխին, եւ, նրան իր յափշտակած տեղից հեռացնելով, դարձեալ առաջինին կանգնեցրեց իր կշտին: Առաջինը գեղեցիկ էր, իսկ վերջինը՝ տգեղ... թռչունները եւս զուրկ չեն գեղասէր ճաշակից: Այդ կարգադրութիւնից յետոյ աքաղաղի երկրորդ ձայնը աղմկեց փոքրիկ խրճիթի լռութիւնը: Նրա ձայնից այժմ զարթնեց պառաւ երէց կինը: Դա էր պակաս: Նա քնած էր առանց հանուելու: Վերկացաւ, խարխափելով մօտեցաւ օջախին: Այնտեղ, կրակի վրայ, ինչ-որ եփ էր գալիս, թըժթըժում էր: Պտոյկի խուփը բարձրացրեց եւ նայեց՝ արդեօք ջուրը քաշել չէ՞ր: Նրա մէջ անպատճառ կամ հարիսայ, կամ խաշ եւ կամ քեշկեկ պիտի լինէր, որ ամբողջ գիշերը ստիպած է եփոել, որ վաղ-առաւօտեան պատրաստ լինի ուտելու համար: Այդ երեք սննդարար կերակուրները ուտւում են արեգակից առաջ, որ ամբողջ օրը կարելի լինի մարսել: Վերջացնելով իր գործը օջախի մօտ, երբ պառաւը մի ինչ-որ բան որոնում էր խրճիթի մէջ, նրա աչքին ընկաւ օրօրոցի դաստակի վրայ քնած հարսը: Նա մօտեցաւ եւ, ոտքով բօթելով նրան մրթմրթաց. «դու մի օր այդ երեխային կը խեղդես. քանի անգամ ասել եմ քեզ, որ ծիծ տալու ժամանակ քնելու չէէ: Նկատողութիւնը ծանր էր: Հարսը ուղղեց իր դիրքը եւ, տեսնելով, որ երեխան վաղուց արդէն քնած էր, օրօրոցի քօղը ցած թողեց, իր տեղում նստած մնաց: Պառաւը այլեւս չմտաւ իր անկողինը, խրճիթի դուռը կամաց բաց արաւ, դուրս եկաւ սրահը, նայեց դէպի երկինքը, տեսնելու, թէ գիշերի ո՛ր ժամն է: Աստղերը նրա ժամացոյցն էին: Նա վերադարձաւ եւ, թել մանելու ճախարակը իր ետեւից քարշ տալով, կրկին դուրս եկաւ սրահը: Այնտեղ մնաց, եւ մի քանի րոպէից յետոյ լսելի եղաւ ճախարակի բարակ ճլվլոցը: Այժմ ամէն յոյս կորած էր. նա կերբերոսի նման դուռը բռնեց: Ես այլեւս չէի կարող դուրս գալ: Պառաւը այնտեղ կը մնար եւ մինչեւ լոյս կը մանէր: Սկեսուրը վեր կենալուց յետոյ հարսին արդէն անպատշաճ էր քնել. դա էլ վեր առեց իր կարը, նստեց սիւնի մօտ, ճրագի հանդէպ: Սկեսուրը մանում էր, հարսը կարում էր: Իսկ ինձ տանջում էր մի կողմից անքնութիւնը, միւս կողմից նրան տեսնելու, նրա հետ խօսելու սաստիկ փափագը: Գոնէ շուտ լուսանար. որքա՜ն երկար էր այդ գիշերը: Ես կրկին սկսեցի համբարել առաստաղի գերանները: Առաստաղից ցած իջայ, սկսեցի համբարել խրճիթի սիւները: Այդ եւս վերջացաւ.